ArmLur.am

I SSN 1829-2763

9 771829 276006 23007

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

19 հունվարի հինգշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

7
(2673)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

## ՓԱՇԻՆՅԱՆԻ ԹԻՄԱԿԻՑՆԵՐԸ ԽԱԲԵԼ ԵՆ. ՄԱՍ 8



Նիկոլ Փաշինյանի թիմակիցների մանիպուլացիաների շարքում այս անգամ «Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է քաղաքային իշխանության ղեկավարների հայտարարությունները: Մասնավորապես, Երեւանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը սոցիալական ցանցի իր էջում պարբերաբար որպես լավ լուր է ներկայացնում հանրային տրանսպորտի ռեֆորմի իրականացման մանրամասները, սակայն «Փաստերի ստուգման հարթակ»-ն ուսումնասիրել է, թե որքանով են ավտոբուսների ներկրման ու, առհասարակ, տրանսպորտային ռեֆորմի վերաբերյալ գործող քաղաքային իշխանության հայտարարած ժամկետները պահվում: Իրականում ներկայացված ժամկետները հեռու են իրականությունից: Հրաչյա Սարգսյանի կառավարման շրջանում՝ 2022-ի օգոստոսին, նա տեղեկացրեց, որ «մրցույթների արդյունքում չինական Zhong Tong մակնիշի 150 հատ ավտոբուս եւ Yutong մակնիշի 15 հատ տրոլեյբուս մինչեւ տարեվերջ կներկրվեն մայրաքաղաք: 2 ամիս անց՝ հոկտեմբերի 2-ին, Հրաչյա Սարգսյանն իր ֆեյսբուքյան էջում տեսանյութ հրապարակեց ավտոբուսների արտադրության գործընթացից եւ կրկին վերահաստատեց, որ մինչեւ տարեվերջ դրանք կհասնեն Երեւան: Այս անգամ քաղաքապետը գրել էր արդեն 165 ավտոբուսների մասին: Արդեն նոյեմբերի 14-ին մեկ այլ տեսանյութ տեղադրելով՝ քաղաքապետը հայտնեց, որ 150 ավտոբուսներն արդեն Չինաստանի նավահանգստում են եւ օրեր անց կուղեւորվեն Երեւան: Զուգահեռաբար քաղաքապետը հոկտեմբեր եւ նոյեմբեր ամիսներին տեսանյութեր տեղադրեց նաեւ ձեռք բերվող 15 նոր տրոլեյբուսների վերաբերյալ, սակայն երկու դեպքում էլ խուսափել էր կոնկրետ ժամկետ նշել, թե երբ դրանք կլինեն Հայաստանում: Արդեն նոյեմբերի 21-ին Հրաչյա Սարգսյանը տեղեկացրեց, որ տրոլեյբուսները մինչեւ տարեվերջ կլինեն Երեւանում: Տարեվերջին՝ դեկտեմբերի 26-ին, Հրաչյա Սարգսյանը տեղեկացրեց, որ MAN մակնիշի 87 նոր ավտոբուսներից 4-ը արդեն Երեւանում են, մինչեւ տարեվերջ Երեւան կհասնի նաեւ Zhong Tong մակնիշի 30 ավտոբուս: Հաջորդ օրը, Հանրային հեռուստաընկերության եթերում պատասխանելով տրանսպորտի վերաբերյալ հարցին, քաղաքապետը հայտնեց, որ MAN մակնիշի ավտոբուսները մինչեւ հունվարի վերջ կլինեն Երեւանում: Քաղաքապետը խոստացավ նաեւ, որ, բացի 87 MAN ավտոբուսներից, 150 Zhong Tong ավտոբուսներն ու 15 տրոլեյբուսները եւս մինչեւ հունվարի վերջ կլինեն Երեւանում: Դրանից մեկ շաբաթ անց՝ հունվարի 4-ին, Երեւան հասան 150 ավտոբուսներից 30-ը: Նկատենք՝ Երեւան քաղաքի տրանսպորտային նոր համակարգի վերաբերյալ խոստումը չկատարվեց Հայկ Մարությանի օրոք, չի կատարվել մինչ այժմ, իսկ քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը մինչեւ նոյեմբերի վերջ շարունակում էր խոստանալ, որ գնված ավտոբուսներն ու տրոլեյբուսները այստեղ կլինեն տարեվերջին: Ստացվում է՝ գործ անել չգիտեն, բայց լավ PR են կարողանում անել, իսկ քաղաքացուն տված խոստումը մնում է օդում:



«Լրագրողների իշխանություն» համարվող ՔՊ-ն երեկ հերթական անգամ աչքի ընկավ ընդդեմ լրագրողների իր հերթական նախաձեռնություններով եւ հայտարարություններով: Այս անգամ էլ հերթը Զարուհի Բաթոյանինն էր: Արցախում ստեղծված աղետալի իրավիճակը մոռացության տված՝ պատգամավորը երեկվա կառավարություն-ԱԺ հարցուպատասխանին հանկարծ հիշել էր լրագրողներին: «44-օրյա պատերազմի ժամանակ մենք դեպքերի ականատես եղանք, որ մեդիամասնագետները, լրագրողներն այնպիսի բովանդակություն էին տարածում, որը վտանգավոր էր ոչ միայն քաղաքացիների առողջության եւ կյանքի համար, այլ կարող էր պետական անվտանգության խնդիր առաջացնել»,- նշել էր նա: Բանն այն է, որ պատգամավորին չեն բավարարում «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում փոփոխություններով նախատեսված մեդիասահմանափակումները: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում «Հրապարակ» թերթի գլխավոր խմբագիր Արմինե Օհանյանն արձագանքում է. «Իշխանությունն այնքան շատ վնաս է հասցրել երկրին, բնակչության առողջությանը, բնակչության ապագային, որ մենք հազարապատիկ հրապարակումներ էլ անենք՝ չմտածված, վտանգավոր, վնասի չափին չենք կարող անգամ մոտենալ. դրանք սար ու ձորի տարբերություն են»: «Ժողովուրդ» օրաթերթի գլխավոր խմբագիր Քնար Մանուկյանն այս առիթով ասաց. «Օրինակելի կլիներ, եթե Բաթոյանն իր թիմակիցների կողմից ուղղորդվող, անորակ լրատվություն հաղորդող անհասցե կայքերի փակումից սկսեր իր սահմանափակումների ակցիան: Մարդկանց ուղեղները լվացող, ցածրորակ լուրեր հաղորդող՝ իշխանական՝ պատերազմական սուտ լուրեր տարածող կայքերը թողած՝ ի՞նչ սահմանափակումներից է խոսում պատգամավորը»:



«Ժողովուրդ» օրաթերթին ուշագրավ մանրամասներ են հայտնի դարձել, թե ԱԺ նախկին նախագահ, ներկայումս ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանին ծեծի ենթարկելու գործով կալանավորված անձն ինչ է հայտնել Ազգային անվտանգության ծառայությունում: Նա մասնավորապես նշել է, որ ցանկացել է հարվածել Միրզոյանին, սակայն կարծում է, որ իր հարվածը Արարատ Միրզոյանին չի հասել: Նախաքննության շահերից ելնելով՝ Ա.Բ-ի անուն-ազգանունը ամբողջությամբ չենք ներկայացնում: Ամեն դեպքում, նշենք, որ նա Երեւան քաղաքի բնակիչ է, ամուսնացած է եւ ունի երեխաներ: Նշենք, որ երեկ Ազգային անվտանգության ծառայությունը հայտնեց, որ Ա.Բ-ն, 2020 թվականի սեպտեմբերի 27-ին տեղեկանալով, որ մայրաքաղաք Երեւանում գտնվող ՀՀ կառավարության, Ազգային ժողովի վարչական շենքերի, դրանց ներսում եւ ՀՀ վարչապետին հատկացված կեցավայրի մոտ կատարվում են զանգվածային անկարգություններ, միացել է ՀՀ ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանի նկատմամբ բռնություն գործադրող զանգվածային անկարգությունների մասնակիցներին, ճեղքելով վերջիններիս շարքերը՝ մոտեցել է արդեն իսկ գետնին ընկած Արարատ Միրզոյանին եւ ոտքով հարվածել է վերջինիս՝ այդկերպ բռնություն գործադրելով նրա նկատմամբ: Ա.Բ-ի եւ զանգվածային անկարգությունների մյուս մասնակիցների կողմից գործադրված բռնության հետեւանքով Արարատ Միրզոյանին պատճառվել են բազմաթիվ մարմնական վնասվածքներ, վերջինս կորցրել է գիտակցությունը, վնասվել է նրա աչքը, եւ նա տեղափոխվել է «Էրեբունի» բժշկական կենտրոն: Որեւէ մեկը, որն իրականում հարվածել է Միրզոյանին, չի հայտնաբերվել մինչ այժմ. ում հայտնաբերում են իրավապահները, ավելի ուշ պարզվում է, որ նա չի հարվածել Միրզոյանին:



ՀՀ նախկին նախագահ Արմեն Սարգսյանի երկքաղաքացիության արգելքի առիթով հարուցված քրեական գործը Հակակոռուպցիոն կոմիտեում դոփում է տեղում: Շուրջ երկու տարի է, ինչ Հակակոռուպցիոն կոմիտեում այս գործով քննությունը շարունակվում է, սակայն մինչ օրս քրեական գործով մեղադրյալ չկա: Երեկ «Ժողովուրդ» օրաթերթը ՀՀ գլխավոր դատախազությունից հետաքրքրվեց, թե ինչ փուլում է գործը: Ի պատասխան՝ մեզ հայտնեցին, որ նախաքննությունը շարունակվում է: Ինչն է շարունակվում մասնավորապես՝ պարզ չէ: Նկատենք, որ Հակակոռուպցիոն կոմիտեն ընկել է մանր-մունր ձկների՝ թաղապետարանի աշխատակազմի պաշտոնատար անձանց, ոստիկանության նախկին տեսուչի եւ նման այլ դեպքերի հետեւից, մինչդեռ խոշոր ձկները լողում են անպատիժ: Հիշեցնենք, որ 2021 թվականին 53 փաստաբան հանցագործության մասին հաղորդում էր ներկայացրել՝ ՀՀ նախկին նախագահ Արմեն Սարգսյանի՝ երկքաղաքացիության փաստը թաքցնելու հետ կապված: Հատուկ քննչական ծառայությունը (ՀՔԾ) մերժել էր քրեական գործ հարուցելը, որի դեմ փաստաբաններով բողոք էին ներկայացրել: Փաստաբանների պալատի նախկին նախագահ Արա Զոհրաբյանը տեղեկացրել էր, որ Գլխավոր դատախազությունը, բողոքի հիման վրա, վերացրել է ՀՔԾ որոշումը եւ հարուցել է քրեական գործ՝ Քրեական օրենսգրքի 325 հոդվածի 1-ին մասի (փաստաթղթեր կեղծելը, իրացնելը կամ օգտագործելը) հատկանիշներով: Միեւնույն է, գործը փաստացի չի քննվում, Արմեն Սարգսյանն էլ հասցրեց այդ ընթացքում խորհրդավոր կերպով հրաժարական տալ ու անհետանալ Հայաստանից:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Է

# ՍԽԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՀՆՉՈՒՄ

**Ազգային ժողովի «Պատիվ ունեմ» խմբակցության քարտուղար Տիգրան Աբրահամյանը վստահ է՝ Արցախի շրջափակման ու Լաչինի միջանցքի փակման հարցում պատասխանատվության մեջ բաժին նաեւ հայաստանյան իշխանություններն ունեն:**



«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում մանրամասնում է՝ Լաչինի միջանցքը բացելու համար ինչ պետք է ու կարող է անել իշխանությունը, որ չի անում:

**-Պարո՛ն Աբրահամյան, Արցախն արդեն 38 օր է՝ շրջափակման մեջ է, հայտարարություններ եւ կոչեր շարունակում են հնչել, սակայն հստակ արդյունք չենք տեսնում: Ի՞նչ գնահատական եք տալիս:**

-Իրավիճակը բավականին ծանր է, առաջիկա օրերին դա ավելի վատ բնույթ է կրելու: Դա պայմանավորված է դեղորայքի, սննդի պակասով, էլ չեմ խոսում էլեկտրաէներգիայի անբավարար պաշարի մասին, եւ մեծանալու է այն ժամանակահատվածը, երբ Արցախում հովհարային անջատումներ կլինեն: Հիմա եթե արդեն չորսժամյա ռեժիմ է, ապա այսպես շարունակվելու դեպքում երկու-երեք շաբաթ հետո այն կարող է դառնալ ընդամենը 10 կամ 12 ժամ աշխատանքային ռեժիմ: Գիտեք, որ սա հետեւանք է Ադրբեջանի կողմից ահաբեկչական գործողության իրականացման, եւ Հայաստանից Արցախ գնացող էլեկտրագիծը պարզապես շարքից հանվել է: Օգոստոս-սեպտեմբեր ամիսներին հանձնվում էր Բերձոր, Սուս ու Աղավնո քաղաքները, եւ երբ ճանապարհը փոփոխության էր ենթարկվում, Հայաստանի իշխանությունները ստանձնել էին պարտականություններ գծերը փոխելու: Սակայն էլեկտրական գիծը փոփոխության չի ենթարկվել, եւ դա հնարավորություն է ստեղծել հենց Բերձորի հատվածում կտրել այն: Հայաստանի դիրքորոշումը համարժեք չէ:

**-Ի՞նչ պետք է աներ իշխանությունը, որ չի անում:**

-Իշխանության անելիքների մասով խոսենք երկու տեսանկյունից. կար 44-օրյա պատերազմ, դրա հետեւանքներ, մյուս կողմից՝ կամք եւ ցանկության բացակայություն: Դա իշխանության դիրքորոշումն է Արցախի հարցում: Այն հայտարարություններով, որ ՀՀ իշխանությունների կողմից հնչում են, ավելի մեծ աջակցություն ադրբեջանական կողմին հնարավոր չէ պատկերացնել: Իշխանությունը հայտարարում է, որ իր անելիքը միայն հումանիտար բնույթի հարցերում է, եւ, բնականաբար, սա եւս Ադրբեջանի համար գործելու լայն հնարավորություն է միջանցքը փակ թողնելու տեսանկյունից:

**-Ենթադրենք՝ Նիկոլ Փաշինյանը կանգնի եւ հայտարարի, որ Արցախը չի լինի Ադրբեջանի կազմում, եւ վերահաստատի, որ Արցախը Հայաստան է եւ վերջ, դրանից հետո Ադրբեջանը կբացի՞ միջանցքը:**

-Գիտեք, Դուք վերցրեցիք իմ երեք հիմնական փաստարկներից մեկը եւ այս հարցադրումը դրա վրա կառուցեցիք: Այն իրավիճակը, որ այսօր ստեղծված է, բնականաբար ունի, այսպես ասած, հետեւանքների մի ամբողջ փաթեթ եւ կախված է այդ բոլոր բաղադրիչների առկայությունից: Միայն մեկ բաղադրիչը վերցնելը, քննարկելն ու այն հիմք դարձնելը չի բխում հարցի կարգավորման տրամաբանությունից: Մեկ բան է, թե դու ինչ ես հայտարարում, մեկ այլ բան է, թե այդ հայտարարություններից հետո ինչ իրավիճակ է: Կարող են լինել հայտարարություններ, որ պետք չէ անել, պետք է անել մի քանի ամիս հետո կամ երբեք էլ չանել: Օրինակ՝ չպետք է անել այնպիսի հայտարարություն, ըստ որի՝ Արցախը կարող է լինել Ադրբեջանի մաս. սա հենց այն թեզն է, որ այս ընթացքում խորհրդարանում Նիկոլ Փաշինյանի թիմի կողմից առաջ է քաշվում: Չպետք է հնչեն հայտարարություններ, որ, օրինակ, Հայաստանն անգամ իրեն չի կարողանում պաշտպանել, ուր մնաց Արցախին պաշտպանի: Այսպիսի հայտարարություններ հնչում են իշխող թիմի անդամների կողմից: Այս ամենն է փորձում պնդել եւ հիմնավորել Նիկոլ Փաշինյանն ու իր թիմը:

*Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ*

ԻՐԱՐԱՆՑՈՒՄ Է ԱՌԱՋԱՑՐԵԼ

# ԿԳՄՍ-Ն ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՍՏԱՏՈՒՄ Է

**2022-ի դեկտեմբերի 16-ին «Ժողովուրդ» օրաթերթի հրապարակած լուրը, որ վերաբերում էր այժմ կրթության, գիտության, մշակույթի ու սպորտի նախարարի պաշտոնը զբաղեցնող Ժաննա Անդրեասյանի՝ փոխնախարար եղած ժամանակ մարզպետարաններ ու Երեւանի քաղաքապետարան հասցեագրված շրջաբերականին, մեծ իրարանցում էր առաջացրել թե՛ մանկավարժների, թե՛ ոլորտով հետաքրքրվող անձանց, թե՛ նախարարության լրատվական ծառայության աշխատակիցների շրջանում (վերջիններս պետք է կարողանային թեման գեղեցիկ կերպով «բարի» կամ «անշառ» քողի ներքո ներկայացնել): Տիկին Անդրեասյանի շրջանառած շրջաբերականը, հիշեցնենք, «դպրոցները ռազմական օգտագործումից» հեռու պահելու մասին էր, ինչը, օրինակ, «Հայ ասպետ» կրթադաստիարակչական հիմնադրամի տնօրեն Կարին Տոնոյանի համոզմամբ, ռազմահայրենասիրական նշանակության ուսումնական ակումբներին կամ խմբակներին դպրոցներից հեռու պահել է նշանակում: Նորանշանակ նախարարը թեեւ քանիցս անձամբ է փորձել թեման «մեկնաբանել» ու մեղքն իր վրայից մեզ վրա գցել, բայց նախարարությունում վերջերս տեղի ունեցած հանդիպումն, օրինակ, ճիշտ հակառակն է ապացուցում, ավելին՝ վերահաստատում մեր լուրի իսկությունը:**

Այսպես, հունվարի 10-ին ԿԳՄՍՆ նորանշանակ փոխնախարար Արաքսիա Սվաջյանը հանդիպել է ռազմահայրենասիրական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, ու, ըստ նախարարության լրատվական ծառայության տարածած հաղորդագրության, հանդիպման նպատակը «համագործակցության հետագա հեռանկարները քննարկելն» է եղել: Նախարարությունը, փաստացի, հասկանալով, որ հարցը նախեւառաջ հանրային դաշտում պետք է քննարկեր, ապա նոր շրջաբերականներ շրջանառեր (թեկուզ միայն ավելորդ աղմուկից խուսափելու համար), ոլորտի ներկայացուցիչների հետ հանդիպում է կազմակերպել: Եվ եթե իսկապես «մութ սենյակում կատուներ չլինեին», ապա գործադրի ներկայացուցիչները ո՛չ հանդիպում կկազմակերպեին, ո՛չ էլ մեր կողմից բարձրաձայնված հարցը կքննարկեին: Հաղորդագրության մեջ ամենազավեշտալին այն է, որ Սվաջյանը վերոնշյալ հանդիպման մասնակիցներին հավաստիացրել է, թե շրջաբերականը որեւէ առնչություն չի ունեցել «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասավանդման ուսումնական գործընթացի եւ ռազմահայրենասիրական կազմակերպությունների գործունեության հետ: Սակայն հատուկ տիկին փոխնախարարուհու համար շեշտենք՝ «ՆԶՊ» առարկան դպրոցական ծրագրերից հանելու մասին «Ժողովուրդ» օրաթերթը բառ անգամ չի գրել, այդ մասին նույնիսկ ակնարկ չի եղել: Ավելին՝ սեւը սպիտակի վրա գրել ենք. «Դպրոցներում, փաստորեն, բացի «Նախնական զինվորական պատրաստվածություն» (ՆԶՊ) առարկայից, դպրոցականները ռազմահայրենասիրական այլ ծրագրերի ու դասընթացների այլեւս չեն կարող մասնակցել»: Հետրաբար, խիստ կարեւոր է նախ լուրը լավ կարդալ ու ըմբռնել, ապա նոր միայն հայտարարություններ անել:

ԿԳՄՍՆ լրատվական ծառայության մեկ այլ «պարզաբանում», որ վերաբերում էր Գեղարվեստի ակադեմիայում տեղի ունեցած ռեկտորի աննախադեպ ընտրության մասին «Ժողովուրդ» օրաթերթում տպագրված լուրին, իրականում նորից մեր տեղեկության հաստատումն էր: Լրատվականի կողմից ներկայացված տեքստի վերջին պարբերությունը, այն է՝ «Նախարարությունը բուհի հոգաբարձուների խորհրդի կողմից տեղեկացվել է, որ նիստից հետո՝ փաթեթի կազմման ժամանակ, բացահայտվել է խնդիր, որի կարգավորման նպատակով հաջորդ շաբաթ նախատեսվում է խորհրդի նիստ գումարել», ուղղակի հաստատումն է մեր կողմից բարձրաձայնված այն թնջուկի, որ գրանցվել էր Գեղարվեստի ակադեմիայի ընտրության ժամանակ:

*Ս. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ*

## ՎԱՐՈՒՅԹ

Երեւանի քաղաքապետարանի նկատմամբ նոր վարույթ կհարուցվի: Պատճառը 2021 եւ 2022 թվականներին ավտոբուսների ձեռքբերման գործընթացն է, ինչը շատ հարցեր է առաջացրել Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի մոտ: Ըստ հանձնաժողովի՝ 2021 եւ 2022 թվականների ընթացքում ավտոբուսների ձեռքբերման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգերի հրավերների տեխնիկական բնութագրերով առերեւույթ սահմանվել են այնպիսի պահանջներ, որոնք կարող է հանգեցնել գնման ընթացակարգերի հնարավոր մասնակիցների համար անհավասար պայմանների ստեղծմանը եւ տնտեսական մրցակցության սահմանափակմանը: Բացի այս, արձանագրվել է տեխնիկական բնութագրերով սահմանված չափորոշիչների միայն կոնկրետ մեկ սուբյեկտի կողմից արտադրվող փոխադրամիջոցների չափորոշիչներին համապատասխանելու հավանականությունը, ինչը կարող է վկայել այլ տնտեսավարողի հետ համաձայնության ձեռքբերման հնարավորության մասին: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ հանձնաժողովը դիմել է քաղաքապետարան 2021 եւ 2022 թվականների ընթացքում ավտոբուսների ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով: Քաղաքապետարանը տրամադրել է ոչ ամբողջական տեղեկություն, բայց, չնայած դրան, հանձնաժողովը որոշել է կասեցնել հարուցված վարույթը: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ առաջիկայում վերսկսելու է վարույթը: Ի դեպ, նշենք, որ քաղաքապետարանը մինչ այս հասցրել է մեկ անգամ հանձնաժողովի կողմից նախազգուշացում ստանալ տեղեկությունը ոչ ամբողջական տրամադրելու համար: Այս դեպքում քաղաքապետարանից պահանջվել էր ներկայացնել ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից ինքնակամ կառույցների օրինականացման դիմումների վերաբերյալ տեղեկատվություն, «Քաղաքաշինություն» ընկերության եւ քաղաքապետարանի միջեւ կնքված բոլոր գործող պայմանագրերի պատճենները:

## ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

Հայաստանում դատախազների աշխատավարձը զգալի չափով կբարձրանա: ArmLur.am-ը տեղեկացավ, որ ՀՀ արդարադատության նախարարությունն առաջարկում է դատախազներին վճարել ամսական հավելում՝ պաշտոնային դրույքաչափի 92 տոկոսի չափով: Օրինակ՝այս տարվա ապրիլ-դեկտեմբեր ամիսների համար ՀՀ դատախազությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող ընդհանուր 432 անձի ամսական դրույքաչափի 92 տոկոսի չափով հավելում նախատեսելու դեպքում նախնական հաշվարկով տարեկան կտրվածքով անհրաժեշտ է շուրջ 2 մլրդ 443 մլն 304 հազար 718 դրամ:

Ըստ Արդարադատության նախարարության՝ դատախազներին վճարվող հավելումների չափը որոշելիս հիմք է ընդունվել առանձնակի ռիսկային, բարդություններով պայմանավորված եւ մասնագիտացում պահանջող պաշտոններ զբաղեցնող անձանց տրամադրվող հավելումների միասնական, չտարբերակված մոտեցում սահմանելու անհրաժեշտությունը:

## ՀՐԱՏԱՊ ՆԱՄԱԿՆԵՐ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանը դիմել է միջազգային կառույցներին: «Ադրբեջանի կառավարության գործակալները խախտել են Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի անկյունաքարային դրույթները, որը պետք է դառնա միջազգային իրավասու մարմինների հրատապ քննության ու Ադրբեջանի նկատմամբ կոնկրետ պատժիչ գործողությունների առարկա: Ադրբեջանն այս հանցավոր գործողությամբ եւս մեկ քայլ կատարեց էթնիկ հայերի ցեղասպանության քաղաքականության կյանքի կոչման ուղղությամբ: Քաղաքակիրթ աշխարհի լռության պայմաններում մարդկության դեմ Ադրբեջանի հանցագործությունները կրելու են շարունակական բնույթ»,- նշել է նա:

## ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾԻ ԴՈՒՍՏՐԸ

Ներքին գործերի նախարարի նորանշանակ տեղակալ, նախկինում ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Արփինե Սարգսյանի հայրը ՀՀԿ-ի իշխանության տարիներին բարձր պաշտոն է զբաղեցրել եւ հասցրել մեղադրվել կոռուպցիոն մի աղմկահարույց գործի շրջանակներում: Խոսքը ՊՆ նախկին մատակարար Աշոտ Սարգսյանի մասին է, որը հայտնի է նաեւ որպես վեդեցի Տոզդոյի Աշոտ: Դեռ 2014 թվականին «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Աշոտ Սարգսյանը ՊՆ-ին ապահովել է վիդեոկոնֆերանս սրահների տեխնիկայով: Մատակարարելուց հետո պարզվել էր, որ տեխնիկան ՊՆ-ի վրա վաճառվել է շուկայականից շատ բարձր գնով: Նրա գլխավորած «ԱՍ-Թեչ անվտանգության համակարգեր» ընկերությունը գործում էր 2005 թվականից եւ հիմնականում ծառայություններ էր մատուցել պետական եւ հանրային կառույցներին՝նրանց շենքերը կահավորելով համապատասխան սարքավորումներով: Այս ընկերությունը տեխնիկայով է ապահովել մասնավորապես ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ կառավարության, դատարանների շենքերը: Ըստ այդ ժամանակ առկա տեղեկությունների՝ Աշոտ Սարգսյանը վիդեոկոնֆերանսների սրահի սպասարկման համար հափշտակել էր շուրջ 455 հազար ԱՄՆ դոլար, եւ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ նա ունեցել է ՊՆ-ում հզոր տանիք՝ ի դեմս ՊՆ կապի վարչության պետ Կոմիտաս Մուրադյանի, որն Աշոտ Սարգսյանի համերկրացին է: Կալանքի տակ էր գտնվում, սակայն, միայն Աշոտ Սարգսյանը: Կոմիտաս Մուրադյանը նախկինում եղել է ԼՂՀ ՊԲ 9-րդ պաշտպանական շրջանի հրամանատար, որտեղ հակառակորդը ապրիլի 2-ին մարտական լուրջ գործողություններ գրանցեց: «Ժողովուրդ»-ին հասած տեղեկություններով՝ Մուրադյանը եւ քառօրյա պատերազմի ժամանակ ազատված մի քանի անձինք «Մայր Հայաստան» զինվորական թանգարանում Սերժ Սարգսյանին ներկայացրել էին զենքերի տեսականին՝ հպարտությամբ նշելով, թե ինչ ունենք մենք, ինչ ունի հակառակորդը, սակայն իրականում թանգարանում ներկայացված զենքերը ՊՆ զինանոցում չէին էլ եղել: Հենց դրա համար Սերժ Սարգսյանը պատժեց մատակարար Սարգսյանին: Փաստորեն, Նիկոլ Փաշինյանի իշխանությունը նախկինում մեծ հափշտակութան համար կալանավորված գործարարի դստերը բարձր պաշտոնի է նշանակել:

ԼԱՉԻՆԻ ՄԻՋԱՆՑՔ

# ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԽՈՉԸՆԴՈՏ

**«Լաչինի միջանցքի արգելափակումը եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հայտարարությունները ուղիղ խախտում են իր իսկ ստանձնած միջազգային պարտավորությունները, միջանցքի շրջափակումն ու այդ հայտարարությունները նոր խոչընդոտներ են ստեղծում խաղաղության գործընթացի համար, սակայն ո՞վ է ասում, թե դա չէ Ադրբեջանի հեռահար նպատակը»,- հայտարարեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը ԱԺ-կառավարություն հարցուպատասխանին՝ անդրադառնալով ՔՊ խմբակցության պատգամավոր Դավիթ Դանիելյանի հիշեցմանը, որ Ադրբեջանի նախագահը վերջին հարցազրույցում կրկին տարածքային պահանջներ է ներկայացրել ՀՀ նկատմամբ: Պատգամավորը հետաքրքրվեց միջազգային կառույցների արձագանքով:**



Կառավարության հետ հարցուպատասխանի ժամանակ՝ երեկ, բազմաթիվ անդրադարձեր եղան Արցախի շուրջ ստեղծված իրավիճակին, հայ-վրացական հարաբերություններին: Վարչապետ Նիկոլ Փաշինյանը անդրադարձավ Երեւանում կայացած Հայաստանի Հանրապետության եւ Վրաստանի միջեւ տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի նիստի արդյունքներին եւ հայ-վրացական հարաբերությունների զարգացման հեռանկարներին: Կառավարության հարցուպատասխանի ժամանակ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Շիրակ Թորոսյանը վարչապետից հետաքրքրվեց, թե ինչպես է գնահատում Հայաստանի Հանրապետության եւ Վրաստանի միջեւ տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի նիստը եւ, ընդհանրապես, հայ-վրացական հարաբերությունները:

«Գիտեք, հարաբերությունների հետ կապված ամենակարեւոր արտահայտիչը նա է, որ Հայաստանի եւ Վրաստանի միջեւ տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի համանախագահությունը ստանձնել են երկու երկրների վարչապետերը: Դա տեղի է ունեցել նախորդ տարի, եւ արդեն երկրորդ դեպքն էր, երբ այդ ֆորմատով աշխատանքներ են իրականացվում: 2020 թվականի առեւտրաշրջանառության արդյունքները շատ տպավորիչ են»,- ասաց Փաշինյանը:

Վարչապետը հիշեցրեց, որ 2019 թվականին Վրաստանի վարչապետը այցելել էր Հայաստան, եւ այդ ժամանակ խնդիր էին դրել առաջիկա մի քանի տարիների ընթացքում առեւտրաշրջանառությունը հասցնել մեկ միլիարդ դոլարի:

«Հիմա հաստատաբար շատ մոտեցել ենք կամ հատել ենք 1 միլիարդ դոլարը»,- հավելեց Փաշինյանը:

Վարչապետի խոսքով՝ 2022 թվականին Հայաստանի Հանրապետությունից Վրաստան արտահանվել է ավելի շատ էլեկտրաէներգիա, քան նախորդ 10 տարիներին միասին վերցրած:

«Հիմա ավելի շատ կենտրոնացած ենք 2023 թվականի ցուցանիշների աճի վրա, որովհետեւ բարձր աճերը մի խնդիր ունեն՝ աճերը պետք է շարունակել, որովհետեւ եթե չշարունակենք, կունենանք հետընթաց: Իհարկե, քաղաքական, տնտեսական, մարդկային շատ ջերմ հարաբերություններ են հաստատված, եւ պետք է այնպես անել, որ այդ հարաբերությունները ինստիտուցիոնալ դառնան ռազմավարական առումով: Այն, որ Հայաստանի եւ Վրաստանի քաղաքացիները կկարողանան սահմանը անցնել նույնականացման քարտերով, դա և՛ տնտեսական, և՛ քաղաքական, և՛ մշակութային, մարդկային գործոն է: Կարծում եմ՝ այդ հանգամանքը իրոք կնպաստի մեր երկրների հարաբերությունների զարգացմանը, մանավանդ որ քննարկում ենք Հայաստանում վրացերենի եւ Վրաստանում հայերենի ուսուցման որակի բարելավման հարցը»,- եզրափակեց Փաշինյանը:

Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը կրկին կմասնակցի Անթալիայի դիվանագիտական փորումին: Այս մասին Ազգային ժողովում հայտարարեց Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը:

«Ինչպես անցած տարի, այս անգամ եւս ես Թուրքիայի արտաքին գործերի նախարարությունից հրավեր եմ ստացել մասնակցելու Անթալիայի դիվանագիտական ֆորումին: Ըստ ամենայնի, կմասնակցեմ այդ ֆորումին, որտեղ ենթադրաբար նաեւ կլինի հանդիպում եւ քննարկում: Կարծում եմ՝ սա շատ կարեւոր է նաեւ երկխոսությունը շարունակելու, զարգացնելու եւ ավելի կոնկրետ առարկայական արդյունքների հանգեցնելու համար»,- ասաց Միրզոյանը:

Արարատ Միրզոյանը 2022 թվականի մարտին մասնակցել էր Անթալիայի դիվանագիտական ֆորումին, որի շրջանակներում հանդիպել էր Թուրքիայի արտաքին գործերի նախարար Մեւլութ Չավուշօղլուի հետ:

*ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

## ԵՐԹ ԿԱՆԻ

Հասարակական-քաղաքական գործիչ Էդգար Ղազարյանը որոշել է երթով շարժվել դեպի «Եռաբլուր» զինվորական պանթեոն: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ նա մասնավորապես նախատեսում է այս տարվա հունվարի 28-ին՝ Հայոց բանակի օրը՝ ժ.12.00-15.00-ն՝ Հանրապետության հրապարակում հավաք, եւ ժ.15.00-ից Հանրապետության հրապարակ-Վազգեն Սարգսյան փողոց-Երեւանի քաղաքապետարանի հարակից տարածք-«Հաղթանակ» կամուրջ-Ծովակալ Իսակովի պողոտա-Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի խաչմերուկ-«Եռաբլուր» պանթեոնի Փառքի կամար-«Եռաբլուր» զինվորական պանթեոն երթուղով երթ անցկացնել:

## ՊԵՏՔ Է ԵՆԹԱՐԿՎԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ

Հայաստանի հատուկ հանձնարարություններով դեսպան Էդմոն Մարուքյանն Ադրբեջանի կողմից Արցախի շրջափակման եւ գազամատակարարումը խափանելու համատեքստում շեշտել է Ադրբեջանին պատժամիջոցների ենթարկելու անհրաժեշտությունը: Մարուքյանն այս մասին ընդգծել է «Թվիթեր»-ի իր միկրոբլոգում գրառմամբ: Նա նշել է, որ Ադրբեջանը խափանել է Հայաստանից բնական գազի մատակարարումը Լեռնային Ղարաբաղ: Լաչինի միջանցքի շրջափակման 37-րդ օրը Ադրբեջանը կասեցրել է Արցախ գազամատակարարումը, ինչպես նաեւ խոչընդոտում է Լեռնային Ղարաբաղի 120 հազար բնակչության բոլոր հիմնական կենսական կարիքների ապահովմանը: «Այդ գործողությունների համար Ադրբեջանը պետք է պատժամիջոցների ենթարկվի»,- շեշտել է Մարուքյանը:

## ԴԱՐՁԱՎ ԱՌԱՋԻՆ ԵՐԿԻՐԸ

Հայաստանը դարձավ Կովկասում առաջին երկիրը, որը ստորագրեց Երեխաների, երիտասարդների եւ կլիմայի գործողությունների մասին միջկառավարական հռչակագիրը: Հայաստանը աշխարհում այս հռչակագիրը ստորագրող 38-րդ երկիրն է: ՀՀ շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանը նշեց, որ Հայաստանը հռչակագրի ստորագրմամբ պարտավորվում է ապահովել երեխաների եւ երիտասարդների առաջնահերթությունների ընդգրկումը կլիմայի փոփոխությանն ուղղված գործողությունների մեջ: «Այսօր կլիմայական փոփոխությունները ոչ միայն Հայաստանի, այլ ամբողջ աշխարհի համար դարձել են առաջնային, եւ երեխաներն ու երիտասարդները, ըստ էության, կլիմայական փոփոխությունների ամենախոցելի թիրախում են գտնվում: ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ այս հռչակագիրը էական փոփոխությունների հիմք կլինի ոլորտի մասին գիտելիքների, տեղեկատվության ստացման համար: Այսօրվա մեր կատարած աշխատանքն ապագա սերնդին ավելի շատ իրազեկվածություն եւ ներառություն կապահովի: Երիտասարդներն էլ հաճախ կլիմայական փոփոխությունների մասով իրենց լուծումներն են առաջարկում»,- ասաց Սիմիդյանը:

## ԵՐԿՐԱՇԱՐԺ

Սույն թվականի հունվարի 18-ին՝տեղական ժամանակով ժամը՝ 14:08-ին (Գրինվիչի ժամանակով ժամը՝ 10:08-ին), ՀՀ ԱԻՆ սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայության սեյսմոլոգիական ցանցի կողմից գրանցվել է հյուսիսային լայնության 38.29° եւ արեւելյան երկայնության 44.96° աշխարհագրական կոորդինատներով Իրան՝ Սալմաս քաղաքից 20 կմ հյուսիս-արեւելք, օջախի 10 կմ խորությամբ, 5.6 մագնիտուդով երկրաշարժ: Էպիկենտրոնային գոտում ստորգետնյա ցնցման ուժգնությունը կազմել է 8 բալ: Երկրաշարժը զգացվել է Սյունիքի եւ Վայոց ձորի մարզերում 3-4 բալ, Արարատ, Արմավիրի մարզերում եւ Երեւան քաղաքում՝2-3 բալ ուժգնությամբ:

ՄԱՍ 2

# ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՑՈՒՑՄՈՒՆՔԸ

**Ցուցմունքի առաջին մասը՝ նախորդ համարում**



«Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի նախագահ Գագիկ Պողոսյանի ցուցմունքի երկրորդ մասը դատավոր Արուսյակ Ալեքսանյանի քրեական վարույթով:

**Հարց**

-Ասացե՛ք, թե ինչ կարգով է սահմանվում դատավորների հերթապահությունը. հերթապահության գրաֆիկ կազմվո՞ւմ է, թե՞ ոչ:

**Պատասխան**

-Հայտնում եմ, որ Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի «Աջափնյակ-1» նստավայրի դատավորների հերթապահությունը սահմանվում է իմ կողմից ամեն ամիս տրվող հրամանով: Այդ հրամանների համաձայն՝նշված նստավայրի բոլոր դատավորները համարվում են ամեն օր հերթապահող դատավորներ: Սակայն նույն դատավորների կողմից ստեղծվել է հերթապահող երկու խումբ աշխատանքային ծանրաբեռնվածությունն այդկերպ կարգավորելու համար, եւ հերթապահությունն իրականացվել է նշված խմբերի կողմից օրը մեջ: Շաբաթվա ուրբաթ օրը հերթապահող խումբը հերթապահել է նաեւ շաբաթ եւ կիրակի օրերին, որպեսզի հաջորդ շաբաթ եւ կիրակի օրերին ազատ լինի, հերթապահի հաջորդ խումբը:

**Հարց**

-Ասացե՛ք, թե ինչ կարգով եւ հանգամանքներում եք մակագրել 2022թ.-ի սեպտեմբերի 17-ին դատարան ներկայացված ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում իրականացվող թիվ 12146422 քրեական վարույթով մեղադրյալ Սերգեյ Գրիգորյանի նկատմամբ այլընտրանքային խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը:

**Պատասխան**

-Հարցին պատասխանում եմ, որ 2022թ.-ի սեպտեմբերի 17-ը եղել է շաբաթ օր, այսինքն՝ այդ օրը մակագրությունները կատարվել են էլեկտրոնային եղանակով: Նշեմ, որ այդ նույն ժամանակահատվածում «Աջափնյակ-1» նստավայրի գրասենյակում, ի թիվս այլնի, մուտքագրվել է ԵԴ/0345/15/22 եւ ԵԴ/0346/15/22 երկու միջնորդություններ՝ տարբեր անձանց վերաբերյալ այլընտրանքային խափանման միջոց կիրառելու վերաբերյալ: ԵԴ/0345/15/22 միջնորդությամբ սկզբնական կալանքը քննել էր դատավոր Արմեն Շիրոյանը, իսկ ԵԴ/0346/15/22-ը՝ դատավոր Ռազմիկ Մարիկյանը: Միջնորդությունները մուտքագրվելուց հետո աշխատակիցն էլեկտրոնային կայքով պատրաստել է դրանց մակագրման թերթիկները եւ ուղարկել «Կենտրոն» նստավայրի գրասենյակի ղեկավարի այդ ժամանակ պարտականությունները կատարող Մարիային, որը դրանք էլեկտրոնային կայքով ուղարկել է իմ անձնական էլեկտրոնային կայքին: Ես այդ միջնորդությունների քննարկումը մակագրել եմ դատավոր Արուսյակ Ալեքսանյանին եւ նույն կարգով էլեկտրոնային եղանակով Մարիայի միջոցով հետ եմ ուղարկել «Աջափնյակ-1» նստավայր: Դրանից հետո նկատելով, որ ԵԴ/0345/15/22 գործով սկզբնական կալանքը քննել է դատավոր Արմեն Շիրոյանը, մտածել եմ, որ երկու միջնորդությունները նիսալմամբ եմ մակագրել դատավոր Արուսյակ Ալեքսանյանին: Րոպեներ անց զանգահարել եմ Մարիային, ասել եմ, որ «Աջափնյակ-1» նստավայրից հետ պահանջի դատավոր Արուսյակ Ալեքսանյանին մակագրված երկու միջնորդությունները, դրանք նորից ուղարկի վերամակագրման, քանի որ սխալ մակագրում եմ կատարել: Հետագա 10 րոպեի ընթացքում պարզել եմ, որ դատավոր Ռազմիկ Մարիկյանը գտնվում է արձակուրդում, եւ էլեկտրոնային նույն կարգով Մարիայից ստանալով վերամակագրման թերթիկները՝ներկայացված ԵԴ/0345/15/22 գործով միջնորդության քննարկումը վերամակագրել եմ դատավոր Արմեն Շիրոյանին, որ այդ օրը հերթապահող խմբում է եղել եւ գտնվել է դատարանում, իսկ ԵԴ/0346/15/22 գործով միջնորդության քննարկումը վերամակագրել եմ դատավոր Արուսյակ Ալեքսանյանին, քանի որ, արդեն նշեցի, դատավոր Ռազմիկ Մարիկյանը արձակուրդում էր գտնվում: Վերամակագրման թերթիկները իմ անձնական կայքով ուղարկել եմ Մարիայի գործարկած էլեկտրոնային կայքին, որպեսզի ուղարկի դրանք «Աջափնյակ-1» նստավայր: Դրա հաջորդ օրը, տեղեկանալով, որ ԵԴ/0345/15/22 գործով միջնորդության քննումը չի հանձնվել դատավոր Արմեն Շիրոյանին, փորձել եմ հասկանալ, թե ինչ է կատարվել, եւ ինչն է պատճառը: Մարիային հրավիրել եմ իմ աշխատասենյակ եւ ասել եմ, որ ճշտի, թե ինչ պատճառով ԵԴ/0345/15/22 գործով միջնորդությունը չի հանձնվել դատավոր Արմեն Շիրոյանին: Քիչ անց Մարիան ինձ տեղեկացրեց, որ ճշտել է տվյալ օրը «Աջափնյակ-1» նստավայրի գրասենյակում հերթապահող Նաիրայից եւ պարզել, որ Արուսյակ Ալեքսանյանին մակագրված հիշյալ երկու միջնորդությունները հետ են պահանջվել կազմից, սակայն գրասենյակ ներկայացվել է միայն ԵԴ/0346/15/22 գործով միջնորդությունը: Դրանից հետո Մարիային խնդրել եմ, որ բացատրի, թե ինչու է նման իրավիճակ եղել, Մարիան էլ ասաց, որ «Աջափնյակ-1» նստավայրի գրասենյակի աշխատակիցները չեն կարողանում բացատրել, թե ինչու է նման բան եղել: Ցանկանում եմ նշել, որ իմ անձնական gagikposhosyan@mail.ru կայքում, որը գործարկում եմ իմ «Սամսունգ 1+» մոդելի բջջային հեռախոսով, երեւում է, որ երկու միջնորդությունները մակագրել եմ դատավոր Արուսյակ Ալեքսանյանին, մակագրման թերթիկներն էլեկտրոնային կայքով ուղարկել եմ Մարիային, ապա վերամակագրումներն եմ ուղարկել Մարիայի գործարկած էլեկտրոնային կայքին, սակայն «Կենտրոն» նստավայրի գրասենյակի էլեկտրոնային կայքում, որը գործարկվել է Մարիայի կողմից, եւ այդ կայքի գաղտնաբառը, բացի տվյալ ժամանակ արձակուրդում գտնվող գրասենյակի ղեկավարից, իմացել է միայն Մարիան, երեւում է, որ միայն ԵԴ/0346/15/22 գործով միջնորդության վերամակագրման թերթիկն է ողարկվել «Աջափնյակ-1» նստավայր: Գրասենյակի ղեկավար Լիլիթից ստացած տեղեկություններով՝ ԵԴ/0345/15/22 գործով միջնորդության վերամակագրումը չկա նաեւ «Աջափնյակ-1» նստավայրի էլեկտրոնային կայքում: Այդ մասով նույնպես պարզաբանում եմ պահանջել Մարիայից, որը պատասխանել է, որ խառը օր էր, շատ միջնորդություններ էին ստացվում, կապը լավ չէր աշխատում, հնարավոր է, որ ԵԴ/0345/15/22 գործով միջնորդության վերամակագրումը չի ուղարկվել «Աջափնյակ-1» նստավայր, կամ ուղարկվել է, սակայն տեխնիկական պատճառներով չի հասել «Աջափնյակ-1» նստավայր եւ չի պահպանվել էլեկտրոնային կայքում: Չնայած այդ հանգամանքին՝ դատավոր Արուսյակ Ալեքսանյանը, տեսնելով որ ԵԴ/0345/15/22 գործով միջնորդության սկզբնական կալանքը քննել է դատավոր Արմեն Շիրոյանը, պետք է այդ միջնորդությունն իր նախաձեռնությամբ ներկայացներ գրասենյակ, քանի որ այդ աշխատանքային կարգը համաձայնեցվել է հենց դատավորների հետ:

**Հարց**

-Դուք 28.09.2022թ.-ին գրություն եք ուղարկել վարույթն իրականացնող մարմնին, հայտնել եք, որ դատավոր Արման Շիրոյանի՝ միջնորդությունը չճանաչելու պատճառը եղել է գրասենյակի աշխատակիցների աշխատանքային ծանրաբեռնվածությունը. ի՞նչ կասեք այդ մասին:

**Պատասխան**

-Հարցին պատասխանում եմ, որ ես արդեն վերը նշեցի, թե ինչ հանգամանքներում է տեղի ունեցել, իսկ ինչ վերաբերում է իմ կողմից տրված գրությանը, ապա գրությամբ նշված աշխատանքային ծանրաբեռնվածություն ասելով՝նկատի եմ ունեցել վերը նշված հանգամանքները:

**Հարց**

-Քրեական վարույթի նախաքննության ընթացքում զննության են ենթարկվել թիվ ԵԴ/0346/15/22 գործով դատական վարույթում առկա փաստաթղթերը, որով պարզվել է, որ վարույթում մեկ մակագրման թերթիկ է առկա, իսկ վերամակագրության թերթիկ փաստաթղթերում չկա. ի՞նչ կասեք այդ մասին:

**Պատասխան**

-Հարցին չեմ կարող պատասխանել. այդ հարցին կարող է պատասխանել կա՛մ գրասենյակի աշխատողը, կա՛մ Արուսյակ Ալեքսանյանը:

## ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵՑ

ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում շարունակվում է 2020 թվականի նոյեմբերի 10-ին ՀՀ կառավարության, Ազգային ժողովի շենքերում եւ պետական նշանակության այլ օբյեկտներում ու հասարակական վայրերում բռնություն գործադրելով, ջարդ իրականացնելով, գույք ոչնչացնելով, վնասելով կամ իշխանության ներկայացուցչին զինված դիմադրելով արտահայտված զանգվածային անկարգություններ կազմակերպելու, դրանց մասնակցելու եւ այլ դեպքերի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը: Քրեական վարույթի շրջանակներում կատարված լայնածավալ քննչական եւ վարութային այլ գործողությունների, ինչպես նաեւ ՀՀ ԱԱԾ օպերատիվ ստորաբաժանումների կողմից իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել են զանգվածային անկարգությունների ընթացքում ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանի նկատմամբ բռնություն գործադրած եւ ՀՀ վարչապետին հատկացված կեցավայրից առանձնապես խոշոր չափերով հափշտակություն կատարած անձինք, որոնք ձերբակալվել են: Մասնավորապես, Ա. Բ.-ն 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի եւ, դրանով պայմանավորված, նույն օրը Հայաստանի Հանրապետությունում եւ Արցախի Հանրապետությունում հայտարարված ռազմական դրության պայմաններում 2020 թվականի նոյեմբերի 10-ին՝ պատերազմը դադարեցնելու մասին Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ ձեռք բերված համաձայնության վերաբերյալ հայտարարությունը զանգվածային լրատվության միջոցներում հրապարակվելուց հետո, համացանցի միջոցով տեղեկանալով, որ մայրաքաղաք Երեւանում գտնվող ՀՀ կառավարության, Ազգային ժողովի վարչական շենքերի, դրանց ներսում եւ ՀՀ վարչապետին հատկացված կեցավայրի մոտ կատարվում են զանգվածային անկարգություններ, դրանց մասնակցելու նպատակով նույն օրը՝ ժամը 03:00-ի սահմաններում, գնացել է Երեւան քաղաքի Զորափի 74 հասցեում գտնվող ՀՀ կառավարական կեցավայրի մոտ եւ միացել այնտեղ հավաքված ամբոխին: Այնուհետեւ Ա.Բ-ն, խախտելով բնակարան հանդիսացող ՀՀ կառավարական կեցավայրի անձեռնմխելիությունը, անտեսելով հատուկ պահպանվող օբյեկտի պահպանության ռեժիմը, չենթարկվելով նշված վայրում ծառայություն իրականացնող ՀՀ պետական պահպանության ծառայության աշխատակիցների օրինական պահանջին, հաղթահարելով կառավարական կեցավայրի մուտքի դարպասների արգելքը՝ պարսպի վրայով ներս ցատկելով, ներխուժել է կեցավայրի տարածք, ապա նաեւ մտել է ՀՀ վարչապետին հատկացված առանձնատուն: Այնուհետեւ, դուրս գալով կեցավայրի տարածքից, գնացել է Կ.Դեմիրճյան փողոց, որտեղ միացել է ՀՀ ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանի նկատմամբ բռնություն գործադրող զանգվածային անկարգությունների մասնակիցներին, ճեղքելով վերջիններիս շարքերը՝ մոտեցել է արդեն իսկ գետնին ընկած Արարատ Միրզոյանին եւ ոտքով հարվածել է վերջինիս՝ այդկերպ բռնություն գործադրելով նրա նկատմամբ: Ա.Բ-ի եւ զանգվածային անկարգությունների մյուս մասնակիցների կողմից գործադրված բռնության հետեւանքով Արարատ Միրզոյանին պատճառվել են բազմաթիվ մարմնական վնասվածքներ, ինչի հետեւանքով վերջինս կորցրել է գիտակցությունը եւ տեղափոխվել «Էրեբունի» բժշկական կենտրոն:

*● Նախկինում կատարված հանցագործություններից բացահայտվել են անձնական ունեցվածքի գողության 3 եւ ավազակային հարձակման 1 դեպք:*

ՄԱՐԶ

## ՀՖՖ-Ի ԿԻՍԱՏ-ՊՌԱՏ ԳՈՐԾԵՐԸ

Բերդ համայնքի սահմանամերձ Ներքին Կարմիրաղբյուր գյուղում Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կողմից գրեթե 5 տարի առաջ սկսված ֆուտբոլի մարզադաշտի կառուցապատումը կիսատ է մնացել: 2018թ. մարտի 25-ին Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Ռուբեն Հայրապետյանը աշխատանքային այցով մեկնել է Ներքին Կարմիրաղբյուր, որտեղ Բերդ խոշոր համայնքի ղեկավար Հարություն Մանուչարյանի հետ քննարկել է մարզադաշտի վերակառուցման հետ կապված խնդիրները: Ռ. Հայրապետյանը լրագրողներին հայտնել է, որ այդ տարվա սեպտեմբերին հիմնանորոգված մարզադաշտը պատրաստ կլինի: 2018թ. թավշյա հեղափոխությունից հետո փոխվեց Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի ղեկավարությունը: ՀՖՖ նոր ղեկավարությունը Ն. Կարմիրաղբյուրի խաղադաշտի կանաչ ծածկը ոռոգելու համար ոռոգման ջրագիծ է կառուցել, խաղադաշտի ծածկը որոշ չափով հարթեցրել է, սակայն խաղադաշտի անհարթությունը շտկող, հարթեցնող տեխնիկա չի ուղարկել սահմանամերձ գյուղ: Մարզադաշտի հանդերձարանում «Բաքսի» է տեղադրվել, սակայն այնտեղ էլեկտրական հոսանք, բնական գազ չկա: Ներքին Կարմիրաղբյուր գյուղի վարչական ղեկավար Լեւոն Առաքելյանը հայտնեց, որ գյուղի մարզադաշտում շուրջ 3 տարի վերակառուցման աշխատանքները դադարեցված են, ՀՖՖ նախագահի տեղակալ Արմեն Նիկողոսյանը վերջին անգամ իր հետ հեռախոսազրույց է ունեցել մոտ մեկ տարի առաջ: Վարչական ղեկավարն ասաց, որ ինքը մի քանի անգամ հնձել է տվել խաղադաշտի խոտը: ՀՖՖ-ն Նոյեմբերյան խոշոր համայնքի սահմանամերձ Բերդավան գյուղում խաղադաշտ է կառուցել, որը գտնվում է Բերդավանում՝ «Փյունիկ» ակումբի ակադեմիայի մասնաճյուղից ոչ հեռու: Բերդավանցի երեխաները նախընտրում են ֆուտբոլ խաղալ մերկ հողի վրա, քան ֆեդերացիայի կառուցած խաղադաշտում, որովհետեւ խաղադաշտի մակերեսն անհարթ է, վախենում են այնտեղ վնասվածքներ ստանալ:

## ՕՏԱՐՎԵԼ Է 87 ՀԱԶԱՐ ԴՐԱՄՈՎ

2022թ.-ի դեկտեմբերի 7-ին Դիլիջան համայնքի ավագանին համաձայնություն է տվել համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանի առաջարկությանը եւ համայնքին պատկանող 2-սենյականոց բնակարանն օտարել է 87 հազար 300 դրամով: Որոշումը հրապարակված է Դիլիջանի համայնքապետարանի պաշտոնական կայքում: Որոշման արձանագրության մեջ նշված է. «Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է տալ համաձայնություն համայնքի սեփականություն հանդիսացող, Հովսեփյան փողոցի թիվ 83 շենքի թիվ 18 երկուսենյականոց՝ 58,2 ք.մ. ընդհանուր մակերեսով բնակարանը վարձակալին ուղղակի վաճառքի ձեւով 87 300 դրամով (մեկ քառակուսի մետրի համար սահմանված է 1500 դրամ) օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը»: Ավագանու որոշման մեջ նշված չէ , թե 87 հազար 300 դրամով ում է օտարվել Դիլիջան քաղաքում երկուսենյականոց, 58,2 քառակուսի մետր մակերեսով բնակարանը:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

ՆԵՐԽՈՒԺԵԼ ԵՆ

# ՆՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ՝ ԱՐՑԱԽԻ ՇՈՒՐՋ

**Ղարաբաղի իշխանությունների ներկայացուցիչները երկու կամ երեք օր առաջ Լաչինի հարցով հանդիպել են Ադրբեջանի ներկայացուցիչների հետ՝ ռուսական խաղաղապահ առաքելության հրամանատար Վոլկովի մասնակցությամբ. երեկ հայտարարեց Ռուսաստանի արտգործնախարարը:**



Հիշեցնելով, որ երեկ ինքը նաեւ հեռախոսազրույց են ունեցել Ադրբեջանի գործընկերոջ հետ, Սերգեյ Լավրովը պնդեց, թե ճանապարհի բացման հարցը շուտով կլուծվի: Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովն ադրբեջանցի գործընկեր Ջեյհուն Բայրամովի հետ հեռախոսազրույցում ընդգծել է Լաչինի միջանցքով լիարժեք երթեւեկության շուտափույթ վերականգնման անհրաժեշտությունը՝ հիմնված նոյեմբերի 9-ի հայտարարության չափանիշների վրա:

Ըստ պաշտոնական Մոսկվայի՝ ռուսական կողմը շեշտել է նաեւ հարակից բոլոր հարցերով փոխադարձ ընդունելի լուծումներ գտնելու անհրաժեշտությունը, որպեսզի Ռուսաստանի, Ադրբեջանի եւ Հայաստանի ղեկավարների պայմանավորվածությունների հիման վրա վերսկսվի հայ-ադրբեջանական կարգավորման գործընթացը:

«Ադրբեջանցիները տվյալներ են ներկայացրել, թե հայկական կողմը Լաչինի միջանցքով ականներ է տեղափոխել: Հիմա մեր զինվորականները ուսումնասիրում են այդ տվյալները: Մենք շատ պարզ բան ենք առաջարկել. խաղաղապահ առաքելությունը, որը Ռուսաստանն ուղարկել է այնտեղ, եռակողմ հայտարարության համաձայն՝ օժտված է շարժը վերահսկելու լիազորություններով: Եվ այդ առաքելությունն ունի բոլոր հնարավորությունները ստուգելու՝ արդյոք տրանսպորտային միջոցներում արգելված, ոչ հումանիտար ու քաղաքացիական նշանակության իրեր կան», - ասել է Լավրովը:

«Արցախի շրջափակումը քաղաքական է. սա միայն ճանապարհի արգելափակում չէ, Ադրբեջանի նպատակը Արցախի սուբյեկտայնությունը ոչնչացնելն է»,- այսօր ընդլայնված խորհրդակցությանն ասել է պետական նախարար Ռուբեն Վարդանյանը:

«Պայքարը գնում է սուբյեկտայնության համար, - նշել է նա՝ շարունակելով:- Ես հստակ ասում եմ, որ մեր նպատակն է ունենալ անկախ Արցախ, որը պետք է լինի անվտանգ եւ զարգացած: Դա շատ կարեւոր նպատակ է, որին հասնելը շատ դժվար է: Բայց ես դա եմ համարում միակ ճանապարհը ու եկել եմ, որ միասին ամեն ինչ անենք՝ այդ նպատակին հասնելու համար»:

Բաքուն շարունակում է հայտարարել, որ ճանապարհը փակ չէ:

Ռուբեն Վարդանյանը նշել է՝ երեկ ռուսական խաղաղապահ զորակազմի ուղեկցությամբ Գորիսից Ստեփանակերտ տեղափոխվող երեխաների հետ կապված միջադեպն ապացուցում է հակառակը. «Կատարվել է անընդունելի դեպք, որը հաստատեց, որ ճանապարհը փակ է մնում: Շուրջ վեց շաբաթ ընտանիքից բաժանված երեխաներին փորձ է արվել վերադարձնել խաղաղապահների միջոցով, բայց տեսանք, որ անգամ այս պարագայում ադրբեջանցիներն իրենց թույլ են տվել մտնել երեխաներին տեղափոխող մեքենա, նկարահանում կատարել. սա ակնհայտ ոտնձգություն է եւ մեծ սթրես է եղել երեխաների համար»:

Գնահատելով ստեղծված իրավիճակը՝նա նշել է, որ այն չափազանց բարդ է, քանի որ ճգնաժամի պայմաններում արդեն հին համակարգն ու մեխանիզմները չեն գործում, եւ անհրաժեշտ է համարել ճգնաժամին արձագանքող ճկուն լուծումներով նոր ու ավելի արդյունավետ համակարգի ձեւավորումը: Այս մասին մանրամասներ էր հայտնել Արցախի ՄԻՊ Գեղամ Ստեփանյանը: «Շուշի-Քարին տակ հատվածում՝ ճանապարհի շրջափակված մասում, որտեղ տեղակայված են «էկոակտիվիստ» ձեւացող ադրբեջանական կառավարական գործակալները եւ նրանց սպասարկող լրագրողները, մեքենան կանգնեցվել է ադրբեջանցիների կողմից, այնուհետեւ մեքենային են մոտեցել քաղաքացիական հագուստով, դեմքերը փակած 10-15 ադրբեջանցիներ տեսախցիկներով, նրանցից ոմանք ներխուժել են մեքենա եւ նկարահանել մեքենայում գտնվող երեխաներին: Ադրբեջանցիների սադրիչ գործողությունների հետեւանքով մեքենայում իրարանցում է առաջացել, որի հետեւանքով երեխաներից մեկը ուշաթափվել է: Ռուս խաղաղապահների կողմից ձեռնարկված գործողությունների արդյունքում նրանք հեռացվել են մեքենայից, մեքենան շարունակել է ընթացքը: Այնուհետեւ՝ ճանապարհի շրջափակված հատվածով անցնելիս, ադրբեջանցիները ցուցադրաբար բղավոցներ են հնչեցրել երեխաներին տեղափոխող մեքենաների ուղղությամբ», - մանրամասնել է օմբուդսմենը:

*ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

ԱՐՑԱԽԻ ՄԻՊ

# ԱՐՁԱԳԱՆՔ ԴԵՌԵՎՍ ՉԿԱ

**Ադրբեջանցի կեղծ «բնապահպանների» խումբը երեկ ահաբեկող գործողություններ է իրականացրել Հայաստանից Արցախ վերադարձող 19 երեխայի նկատմամբ: Ադրբեջանցիները, դեմքերը փակած, ներխուժել են երեխաներին տեղափոխող մեքենա ու ահաբեկել երեխաներին:**

«Ժողովուրդ» օրաթերթն Արցախի ՄԻՊ Գեղամ Ստեփանյանից հետաքրքրվել է՝ ինչպես է միջազգային հանրությունն արձագանքել միջադեպին:

**-Պարո՛ն Ստեփանյան, այս միջադեպից հետո դիմե՞լ եք երեխաների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող միջազգային կառույցներին, ի՞նչ արձագանք կա:**

-Դեպքի նկարագրության հայտարարությունն առանձին նամակով ուղարկվել է միջազգային տարբեր կազմակերպությունների եւ կառույցների: Արձագանք դեռեւս չկա:

**-Ձեր գնահատմամբ՝ արդյոք Ադրբեջանի անպատժելիությունը եւ միջազգային հանրության լռությունը չի՞ հանգեցնում Ադրբեջանի կողմից իրականացվող նոր՝ ավելի ծանր հանցագործությունների արցախցիների նկատմամբ:**

-Իհարկե, լռությունն է պատճառը, եւ եթե նայեք Ադրբեջանի վարքագիծը, կտեսնեք, որ որքան անպատժելիությունը պահպանվում է, այնքան Ադրբեջանն ավելի լկտի քայլերի է դիմում: Օրինակ՝ Արցախում գազամատակարարումը դադարեցվել է, այսինքն՝ խաղում են մարդկանց կյանքի հետ, 120.000 արցախցի Ադրբեջանի իշխանությունների քմահաճույքներին է թողնված. սա անպատժելիության հետեւանք է:

**-Պարո՛ն Ստեփանյան, ըստ Ձեզ՝ Հայաստանի եւ Արցախի իշխանություններն օգտագործո՞ւմ են իրենց ձեռքի տակ եղած ողջ դիվանագիտական գործիքակազմը միջազգային հարթակում:**

-Որքանով տեղյակ եմ, դիվանագիտական տարբեր խողովակներով հարցը բարձրաձայնվում է: Հարցը քննարկվում է նաեւ Սփյուռքի մեր հայրենակիցների աջակցությամբ եւ նրանց խողովակներով: Հարցն այն է, որ սա հետեւողական աշխատանք պահանջող իրավիճակ է, որի հանգուցալուծման համար բոլոր կողմերի ջանքերը պետք է ներդրվեն:

**-Միջազգային հանրությունը թեեւ պարբերաբար հայտարարություններ է անում Արցախի շրջափակման մասով, սակայն դրանք հայտարարություններից այն կողմ չեն անցնում, որեւէ շոշափելի քայլեր չեն արվում այս ուղղությամբ:**

Ինչպե՞ս կգնահատեք միջազգային հանրության արձագանքը Արցախում ստեղծված ճգնաժամին, արդյոք միայն հայտարարություններ անելը բավարա՞ր է այս դեպքում:

-Բավարար կգնահատեի, եթե ճանապարհը բացվեր, բայց արդեն 38 օր փակ ճանապարհ ունենալը 21-րդ դարում աբսուրդ է. այս դեպքում ինչպե՞ս կարող եմ բավարար գնահատել:

*Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ*

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 11 պատահար. 1 մարդ զոհվել է, 18-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

## ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՉԵՆ ԽԱԲԵԼ

2022 թվականի դեկտեմբերի 15-ին «Ժողովուրդ» օրաթերթում հրապարակել էինք հոդված «ՀՀ ոստիկանությանը խաբել են» վերտառությամբ, որում ներկայացրել էինք ՀՀ ոստիկանությունում ՀՀ հաշվեքննիչ պալատի իրականացրած հաշվեքննության արդյունքները, համաձայն որոնց՝ պարեկապահակային ծառայության ավտոմեքենաների համար մրցույթում հաղթած «ՍՍ» ընկերության կողմից մատակարարված տեսախցիկները չեն համապատասխանում մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրին, ըստ որի՝ տեսախցիկները պետք է ունենան մեքենաների պետհամարանիշների ճանաչման ֆունկցիա մինչեւ 300կմ/ժ արագությամբ շարժվելիս, սակայն Շիրակի մարզի պարեկային ծառայության աշխատակիցների կողմից նախնական փորձարկվել է տեսախցիկների՝ պետհամարանիշների ճանաչման ֆունկցիան արագության ընթացքում, ու արձանագրվել է, որ դրանց առավելագույն արագությունը, որի ժամանակ կարող էին ճանաչել մեքենայի պետհամարանիշները, 220-230կմ/ժ է: Մեր օրաթերթի կողմից այս տվյալների հետագա ուսումնասիրություններով այդ տեղեկությունները այդպես էլ չհաստատվեցին: Մեր խմբագրությունը կապ հաստատեց «ՍՍ» ընկերության հետ մեկնաբանություններ ստանալու նպատակով: Վերջինս էլ իր հերթին կապ է հաստատել ABETECHS GmbH (Grundig Security) ընկերության հետ, որից ձեռք է բերել տեսախցիկները մեր հրապարակման մեջ նշված տեղեկությունների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար: ABETECHS GmbH (Grundig Security) ընկերությունը հավաստիացրել է, որ մատակարարված տեսախցիկները ոչ միայն համապատասխանում են պահանջվող պայմաններին, այլ համապատասխան կարգաբերումների դեպքում կարող են գրանցել նաեւ մինչեւ 400 կմ/ժ արագություն, այդ տեսախցիկները կիրառվում են աշխարհի տարբեր երկրների իրավապահ համակարգերում եւ լավագույնս ծառայում են իրենց առջեւ դրված խնդիրների լուծմանը: Բացի այդ, «ՍՍ» ընկերությունը դեկտեմբերի 15-ի հրապարական մեջ տեղ գտած տեղեկատվության առնչությամբ պարզաբանումներ ստանալու նպատակով ՀՀ ոստիկանությունից խնդրել է տեղեկատվություն տրամադրել, թե որ լիցենզավորված կազմակերպության կողմից է իրականացվել տեսախցիկների փորձարկումը, ինչ տարբերակով եւ ինչ մեթոդոլոգիայով, ինչ կարգաբերումներ են կիրառվել փորձարկման ընթացքում, հնարավորության դեպքում փորձարկումն իրականացրած անձանց տվյալները եւ կատարված փորձարկման արձանագրած արդյունքները: ՀՀ ոստիկանության կողմից, սակայն, այդպես էլ որեւէ տեղեկատվություն կամ պարզաբանում չի տրամադրվել: Քանի որ ՀՀ ոստիկանության եւ որեւէ այլ մարմնի կամ ընկերության կողմից չի ներկայացվել նախորդ հրապարակման մեջ նշված փաստերը հիմնավորող ապացույցներ եւ տվյալներ, ուստի ստացվում է, որ ՀՀ ոստիկանությանը ոչ ոք էլ չի խաբել, եւ նախորդ հրապարակումը հիմնված է եղել չճգրտված տեղեկությունների վրա: Ավելին՝ մեր ունեցած տեղեկություններով՝ այդ տեսախցիկների միջոցով պարեկապահակային ծառայությունը մինչ այժմ կարողացել է հայտնաբերել եւ կանխել բազմաթիվ խախտումներ, ինչը նպաստում է հանրապետությունում օպերատիվ վիճակի վերահսկելիության ուժեղացմանը:

ՀԱՄԵՐԳ

# «ՄԱՆՍՈՒՐՅԱՆ. ԽՈՍՔԻ ԵՎ ՄԵՂԵԴՈՒ ԽԱՉՄԵՐՈՒԿԻՆ» ԾՐԱԳԻՐ

**Հունվարի 27-ին՝ ՀՀ ժողովրդական արտիստ, կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանի ծննդյան օրը, տեղի կունենա «Մանսուրյան. խոսքի եւ մեղեդու խաչմերուկին» խորագրով համերգ, որի ընթացքում կներկայացվեն մաեստրո Մանսուրյանի ստեղծագործությունները. «8 հայրեն սիրո, պանդխտության եւ լուսնյակ գիշերների» ստեղծագործությունը համաշխարհային պրեմիերա է, իսկ «Օրհներգ - Նավապետ Բարի»-ն, որ գրվել է Մեսրոպ Մաշտոցի խոսքերով, Հայաստանում կներկայացվի առաջին անգամ: Համերգի մասնակիցներն են Հայաստանի պետական կամերային նվագախումբը, Հայաստանի պետական կամերային երգչախումբը, Երեւանի պետական կամերային երգչախումբը, մենակատար՝ Տիգրան Քախվեջյան (բարիտոն), ասմունքող՝ Բաբկեն Չոբանյան: Երեկոն կղեկավարի դիրիժոր Ռոբերտ Մլքեյանը: Համերգը կազմակերպվում է Մանսուրյանի անվան կոմպոզիտորների միջազգային մրցույթի շրջանակներում: Նախագծի կազմակերպիչն է «Կողբ» հիմնադրամը, գլխավոր հովանավորն է «Ֆասթ» բանկը, հովանավորներն են Team Telecom Armenia եւ «Տրանսիմպեքս» (FedEx) ընկերությունները:**




Երեկ Արամ Խաչատրյան համերգասրահում տեղի ունեցած մամուլի ասուլիսը նվիրված էր առաջիկա համերգին եւ մանսուրյանական մրցույթին:

Մաեստրո Մանսուրյանը, անդրադառնալով հունվարի 27-ին կայանալիք համերգին, ընդգծեց, որ այն առանձնահատուկ նշանակություն ունի, քանի որ իր տարեդարձի օրն առաջին անգամ հնչելու են երկու կարեւոր ստեղծագործություններ, ինչն իր համար չափազանց հուզիչ է: Ստեղծագործություններից մեկը, որի հիմքում մաշտոցյան օրհներգերն են, կոմպոզիտորը գրել է Չեխիայի նվագախմբերից մեկի պատվերով, եւ առաջին անգամ հնչել է անցյալ տարի: Հեղինակը նկատեց, որ հայրենների համար մեղեդի գրելն իր երազանքն է եղել: «Երիտասարդ էի, երբ գրեցի իմ 4 հայրենները ձայնի եւ դաշնամուրի համար: Մշտական պահանջ ունեի կրկին անդրադառնալու հայրեններին: Մլքեյանի հետ երկար տարիներ ենք համագործակցում, ինչը լավ հիմք հանդիսացավ շարունակելու այդ աշխատանքն արդեն նոր ստեղծագործություններով: Արդյունքում ունենք «8 հայրեն՝ սիրո, պանդխտության եւ լուսնյակ գիշերների»»,- ասաց Տիգրան Մանսուրյանը:

«Կողբ» հիմնադրամի տնօրեն Մարիա Պետրոսյանն ընդգծեց, որ այս նախաձեռնությամբ նպատակ ունեն եւս մեկ անգամ կարեւորելու պոեզիան, երաժշտությունը՝ մաեստրո Մանսուրյանի կերպարով փորձելով ոգեշնչել հատկապես երիտասարդ կոմպոզիտորներին: Նա նշեց, որ ամեն ինչ անելու են, որպեսզի Մանսուրյանի անվան կոմպոզիտորների միջազգային մրցույթը դառնա ամենամյա:

Մանսուրյանի անվան միջազգային մրցույթի գլխավոր հովանավոր «Ֆասթ բանկ» ՓԲԸ-ի գործադիր տնօրենի տեղակալ-զարգացման տնօրեն Գարեգին Դարբինյանի խոսքով՝ FastBank-ի հիմնադիրները մշտապես աջակցել են տարբեր մշակութային միջոցառումների, ինչը դարձել է իրենց ռազմավարության մաս: Նման հարթակները շատ կարեւոր են Հայաստանի համար, եւ եթե ուզում ենք ապագայում ունենալ մեծանուն երաժիշտներ, ապա պետք է ստեղծվի համապատասխան միջավայր: Եվ այս կարեւոր տեսլականին հասնելու համար անհրաժեշտ է աջակցություն, ինչն իրենք անում են: Լինելով ժամանակակից տեխնոլոգիական ընկերություն՝ FastBank-ը համարում է, որ պետք է մոտ կանգնած լինի դասական արվեստին, մշակույթին, պատմությանը, ինչը մեծ ազդակներ է հաղորդում իրենց աշխատանքի ընթացքում:

ՀՀ ժողովրդական արտիստ, դիրիժոր Ռոբերտ Մլքեյանն իր խոսքում ընդգծեց, որ հունվարի 27-ին կայանալիք համերգը պատասխանատվության առումով տարբերվում է մյուս համերգներից, քանի որ հայրենները, որոնք պետք է ներկայացվեն երեկոյի ընթացքում, Մանսուրյանը նվիրել է հենց իրեն. «Ես այն երջանիկներից եմ, ում Տիգրան Մանսուրյանը նվիրել է պարտիտուր, որը հնչելու է այդ կարեւոր օրը: Պետք է լինենք երջանիկ՝ այսպիսի մարդու հետ անընդհատ աշխատելով»:

Անդրադառնալով Տիգրան Մանսուրյանի անվան կոմպոզիտորների միջազգային մրցույթին՝ Ռոբերտ Մլքեյանն ասաց, որ ժյուրիի կազմը բավական բարդ խնդիր է դրել իր առջեւ. «Մրցույթին մասնակցող կոմպոզիտորները պետք է խորապես ուսումնասիրեն պոեզիան: Պետք է գրեն այնպիսի ստեղծագործություններ, որոնք փորձեն հետագայում դառնալ ազգային արժեք: Այդ նպատակին ծառայեցնելու համար մրցույթը, հավանաբար, մի փոքր բարդ կլինի: Ունենք երիտասարդներ, որոնք հրաշալի գրում են»:

Team Telecom Armenia-ի տնօրեն, մրցույթի հոգաբարձուների խորհրդի անդամ Հայկ Եսայանը նշեց, որ ընկերությունը շարունակում է աջակցել հայկական մշակույթի զարգացմանը եւ նոր տաղանդների բացահայտմանն ուղղված ծրագրերին. «Հայ ժողովրդի համար դժվարին ժամանակաշրջանում Կոմիտասը կարողացավ երաժշտության միջոցով տարածել մեր մշակույթը՝ այն դարձնելով հայի ինքնության կարեւոր բաղադրիչներից մեկը: Այժմ մենք պարզապես պարտավոր ենք նպաստել նրա գործի շարունակականությանը, այդ նպատակով էլ միացել ենք մրցույթի կազմակերպչական թիմին»:

## ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ին գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը.

- ք. Երեւան, Շենգավիթ, Արշակունյաց պողոտա, 42/1 շենք, 54 հասցեում գտնվող 39,05 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 17500000 ՀՀ դրամ:

Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:

Աճուրդի փուլերը՝ հոլանդական եղանակով, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 06.02.2023թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ հոլանդական եղանակով կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 03.07.2023թ: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «ԲիԷսԹի» ՍՊԸ-ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների ացնկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.akson.am կայքերը:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄԱԴՐԻԴԻ ԿԻՆՈՓԱՌԱՏՈՆ

# «ԳԱՐՈՒՆ Ա» ՖԻԼՄԻ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ

**«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ «Գարուն ա» գեղարվեստական ֆիլմը հերթական հաջողությունն է գրանցել միջազգային կինոփառատոնում: Ֆիլմն այս անգամ ներկայացված է եղել Մադրիդի կինոփառատոնին՝ արժանանալով երկու մրցանակի «Լավագույն գեղարվեստական ֆիլմ» եւ «Լավագույն ռեժիսոր» անվանակարգերում, իսկ անցյալ տարվա ընթացքում ֆիլմը ներկայացվել է բազմաթիվ կինոփառատոններում եւ բազմաթիվ մրցանակներ շահել:**






Հիշեցնենք, որ ֆիլմը էկրան է բարձրացել 2022 թվականի գարնան առաջին օրը՝ մարտի 1-ին, հանրությանը ներկայացվել է ռեժիսոր Ռոման Մուշեղյանի «Գարուն ա…» ֆիլմը, ֆիլմ՝ պատերազմի, սիրո, մեր օրերի նվիրյալների, միասնության, պետական մտածողության կերտման ու հայրենասիրության մասին՝ երեք սերունդների աչքերով:

Պրեմիերան տեղի է ունեցել «Մոսկվա» կինոթատրոնում: Հանդիսավոր արարողության ընթացքում ՀՀ ՊՆ ռազմական նվագախումբն է ներկայացրել ֆիլմի սաունդթրեքը, իսկ ֆիլմի հեղինակները պատմել են կինոնկարի մասին:

Ֆիլմի գլխավոր պրոդյուսերը Ալեքսանդր Խաչատրյանն է, պրոդյուսերը՝ Դիանա Ավետիսյանը: Սցենարը հեղինակել է Հարություն Ղուկասյանը, օպերատորն է Սուրեն Թադեւոսյանը, իսկ կոպոզիտորը՝ Արման Էլբերտը, մոնտաժը՝ Միքայել Թորգոմյանի, նկարիչ՝ Տիգրան Ասատուրով, դերերում՝ Ալեքսանդր Խաչատրյան, Լեւոն Հախվերդյան, Արմեն Մարգարյան, Մարջան Ավետիսյան, Եվա Ջոհրաբյան, Շանթ Հովհաննիսյան, Ալիս Կապլանջյան, Վահագն Մարտիրոսյան, Սաթենիկ Հազարյան, Նարինե Պետրոսյան, Թումաջ Դանեշ Բեհզադի եւ այլք:

⇨

Հավելենք, որ կինոնկարի գլխավոր հերոսները երեքն են՝ պապ, որդի, թոռ՝ երեք սերունդ, երեք տարբեր բնավորությունների տեր մարդիկ, որոնցից յուրաքանչյուրն արտացոլում է մերօրյա հասարակության մտածելակերպը: Պապը՝ Արամը, պրոֆեսիոնալ զինվորական է, նախկին գնդապետ, ամբողջ կյանքը նվիրել է պետականության կառուցման գործին: Նրա որդին՝ Գնելը, բիզնեսմեն է, մինչ օրս չի ներում հորը հայրենիքն ընտանիքից վեր դասելու համար: Թոռը՝ Լեւոնը, վիրտուոզ երաժիշտ է, որը ոգեշնչվում է իր պապի գաղափարախոսությամբ, սակայն հերոսի կյանքում ապագան եւ հայրենիքի նկատմամբ պարտքը բախվում են իրար՝ ստեղծելով ֆիլմի հիմնական կոնֆլիկտը: Անսպասելի պատերազմը Հայաստանում խառնում է երեք սերունդների անդորրը: Ֆիլմի ընթացքում մենք ականատես ենք լինում մի ամբողջ ազգի ողբերգությանը՝ մի ընտանիքի պատմության միջոցով:




*ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ*

ԼՈՒՐԵՐ

## ՎԱՐՉԱՊԵՏԻ ԳԱՎԱԹ

Հայաստանի Հանրապետությունում սեղանի թենիսի մասսայականացման, բնակչության տարբեր տարիքային խմբերի շրջանում առողջ կենսակերպի գաղափարի արմատավորման նպատակով երկրորդ անգամ կանցկացվի «ՀՀ վարչապետի գավաթ» սեղանի թենիսի սիրողական մրցաշարը: Ինչպես հայտնում են ԿԳՄՍ նախարարությունից, մրցաշարի նախապատրաստման եւ անցկացման աշխատանքները համակարգում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը:

## ՀԱՂԹԱՆԱԿ Է ՏՈՆԵԼ

Հայկական արմատներով ռուս թենիսիստ Կարեն Խաչանովը երկրորդ հաղթանակն է տոնել Ավստրալիայի բաց առաջնությունում: Ավստրալիայի բաց առաջնության տղամարդկանց մենախաղի երկրորդ շրջանում Կարեն Խաչանովը մրցեց Ավստրալիայի ներկայացուցիչ, աշխարհի 84-րդ ռակետ Ջեյսոն Կաբլերի հետ: Մոտ 3 ժամ ձգված մրցախաղում Խաչանովը հաղթեց 4 սեթերից հետո՝ 6:4, 5:7, 6:4, 6:2 հաշվով: Թենիսի Ավստրալիայի բաց առաջնությունը «Մեծ սաղավարտի» տարվա 4 գլխավոր մրցաշարերից մեկն է: Այն անցկացվում է ավստրալական Մելբուռն քաղաքում կոշտ ծածկույթի վրա: Ավստրալիայի բաց առաջնությունն առաջին անգամ անցկացվել է 1905 թվականին: 2022 թվականին Aus Open-ի տղամարդկանց մենախաղում հաղթել է Ռաֆայել Նադալը, իսկ կանանց մրցապայքարում՝ Էշլի Բարտին:

## ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾ Է

Իսպանական Մադրիդի «Ռեալ»-ը հետաքրքրված է Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի կիսապաշտպան Էդուարդ Սպերցյանով: Transfertmarkt-ի էջում գրված է, որ Մադրիդի «Ռեալ»-ը եւ Նիդերլանդների ՊՍՎ-ն այս պահին հետաքրքրված են Էդուարդ Սպերցյանի ծառայություններով: Էդուարդ Սպերցյանը «Կրասնոդար»-ի ակադեմիայի սան է: Ծնվել է 2000 թվականին: 2019 թվականից հանդես է գալիս «Կրասնոդար»-ի հիմնական կազմում: Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմին միացել է 2021 թվականին, նորամուտը հավաքականում նա նշել է Հայաստան-Ռումինիա խաղում:

## 17 ՎԱՅՐԿՅԱՆ ՉԻ ԲԱՎԱՐԱՐԵԼ

Հայաստանի դահուկասպորտի հավաքականի անդամ, օլիմպիական խաղերի մասնակից Միքայել Միքայելյանը հաջող է մեկնարկել Ուսանողական խաղերում: Համաշխարհային ուսանողական խաղերի դահուկավազքի 10 կմ ազատ ոճի մրցատարածությունում Հայաստանի դահուկավազքի հավաքական թիմի առաջատար Միքայել Միքայելյանին 26 պետությունների 82 մասնակիցների հետ համառ պայքարում ընդամենը 17 վայրկյան չբավարարեց բրոնզե մեդալակիր հռչակվելու համար: Նա իրենից առաջ է թողել միայն Նորվեգիայի եւ Ճապոնիայի ներկայացուցիչներին, որոնցից 2-րդ տեղը զբաղեցրած Բոե Մագնուսը 2016թ. Երիտասարդական օլիմպիական խաղերի չեմպիոնն է: Ի դեպ, մրցատարածության զգալի մասը Միքայելյանը եղել է առաջատարի դիրքում:

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» Գ.

# Google Pay-Ն ԱՐԴԵՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է

**«Յունիբանկ»-ը գործարկել է Google Pay ծառայությունը՝ իր հաճախորդներին հնարավորություն ընձեռելով պարզ եւ անվտանգ անհպում վճարումներ կատարել Android եւ WearOS համակարգերով աշխատող սարքերով: Քարտապանները կարող են «Յունիբանկ»-ի Visa քարտերը կցել Google Wallet թվային դրամապանակին, որը եւս այսօր է գործարկվել, եւ վճարումներ կատարել ցանկացած վայրում, որտեղ ընդունվում են անհպում վճարումներ:**

Անվտանգության մի քանի մակարդակների եւ «Յունիբանկ»-ի քարտի պաշտպանվածության շնորհիվ Google Pay-ով վճարումներն ավելի ապահով են: Google Wallet-ին կցված քարտով վճարումների ժամանակ գործարքները կատարվում են վիրտուալ քարտի համարի (token) միջոցով: Թոքենը կապված է դինամիկ անվտանգության կոդի հետ, որը փոխվում է յուրաքանչյուր գործարքի հետ՝ ապահովելով լրացուցիչ պաշտպանություն զեղծարարությունից: Անգամ հեռախոսի կորելու դեպքում քարտապանը կարող է օգտվել «Գտնել իմ սարքը» գործառույթից՝ սարքը ցանկացած վայրից անմիջապես բլոկավորելու, նոր գաղտնաբառ կիրառելու կամ անձնական տվյալները ջնջելու համար:

«Google Pay-ն ապահովում է արագ, հեշտ եւ անվտանգ վճարումներ Android հեռախոսներով կամ Wear OS սարքերով աշխարհի ավելի քան 45 երկրում,- նշեց Google Wallet-ի փոխնախագահ եւ գլխավոր մենեջեր Ջենի Չենգը: -Օգտատերերը կարող են իրենց դեբետային եւ կրեդիտային քարտերը հեշտությամբ կցել Google Wallet-ին եւ վստահ լինել, որ գնումներ կատարելիս իրենց ֆինանսական տվյալներն ապահով են եւ պաշտպանված»:

«Մեր հաճախորդների համար գնալով ավելի ընդունելի է դառնում թվային ապրելակերպը, եւ մենք նպատակ ունենք ճկունություն ցուցաբերել նրանց կարիքները բավարարելու հարցում: Մենք ուրախ ենք, որ Google-ի հետ մեր համագործակցության շնորհիվ կարող ենք մեր հաճախորդներին առաջարկել նոր թվային եւ հուսալի վճարման տարբերակ՝ ամենօրյա գործարքներն ավելի հեշտ եւ հարմարավետ դարձնելու համար: Դրա համար պարզապես պետք է կցել Visa քարտը Google Pay-ին եւ սկսել կատարել անհպում վճարումներ հեռախոսով»,- նշեց «Յունիբանկ»-ի պրոցեսինգի սպասարկման եւ վճարային համակարգերի վարչության պետ Գայանե Մինասյանը:

*Google Pay-ը եւ Google Wallet-ը Google ՍՊԸ-ի ապրանքային նշաններն են:

● *Սեւ ծովի ափին գտնվող Վառնա քաղաքում կիիմնադրվի բուլղարահայ մշակութային տեղեկատվական կենտրոն:*

# ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

**ՀԱՐՑ. Ինչպե՞ս է կատարվում ջրի նպատակային օգտագործումը:**

*Հերիքնազ Մեջլումյան (37 տարեկան)*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Ջուրը պետք է վերցվի եւ օգտագործվի միայն ջրօգտագործման թույլտվության մեջ նշված նպատակներով եւ չպետք է գերազանցի արդյունավետ օգտագործման համար Ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմնի հիմնավորած եւ սահմանած չափաքանակները: Ջրային համակարգերի օգտագործումը պետք է ապահովի արդյունավետ ջրօգտագործումը: Ջրօգտագործման եւ էկոլոգիական թողքի փաստացի չափաքանակները հաշվառելու համար Ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմնի կողմից, սույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետի համաձայն, ջրօգտագործման թույլտվության մեջ ամրագրվում է տվյալների առցանց փոխանցմամբ ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքեր տեղադրելու պահանջը (բացառությամբ կրկնակի (երկրորդային) ջրօգտագործման դեպքի):

*ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն*

**ԺՈՂՈՎՈՒՐԴ.** Ջրօգտագործողի կողմից այդ սարքերի տեղադրման ժամկետները նշվում են Ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմնի կողմից: Ջրօգտագործողին տրամադրվող ջրօգտագործման թույլտվությանը հանդիսանում է անբաժանելի մաս:

## ԿԱՐԳ

**ՀԱՐՑ. Որո՞նք են Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կնքված ամուսնությունների ճանաչումները:**

*Էրիկ Սաղաթելյան (29 տարեկան)*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Հայաստանի Հանրապետության քաղաքացիների միջեւ ամուսնությունները եւ Հայաստանի Հանրապետության ու օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց միջեւ ամուսնությունները, որոնք կնքվել են Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս՝ պահպանելով այն պետության օրենսդրությունը, որի տարածքում դրանք կնքվել են, Հայաստանի Հանրապետությունում վավեր են հյուպատոսական օրինականացման առկայության դեպքում: Օտարերկրյա քաղաքացիների միջեւ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կնքված ամուսնությունները, եթե պահպանվել է այն պետության օրենսդրությունը, որի տարածքում դրանք կնքվել են, Հայաստանի Հանրապետությունում վավեր են հյուպատոսական օրինականացման առկայության դեպքում:

*ՀՀ արտաքին գործերի նախարարություն*

**ԺՈՂՈՎՈՒՐԴ.** Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ապրող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ամուսնությունը կնքվում է Հայաստանի Հանրապետության հյուպատոսական հիմնարկներում: Օտարերկրյա քաղաքացիների՝ Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա պետությունների հյուպատոսական հիմնարկներում կնքված ամուսնությունը Հայաստանի Հանրապետությունում վավերական են փոխադարձության պայմաններով:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարը՝ համացանցից*




Լեհական «Պոգոնը» Թուրքիայի Բելեք քաղաքում ստուգողական հանդիպում է անցկացրել Աղդամի «Ղարաբաղի» հետ:

Խաղի հաշիվը 27-րդ րոպեին բացել է Հայաստանի հավաքականի եւ «Պոգոնի» կիսապաշտպան Վահան Բիչախչյանը՝ գրավելով ադրբեջանական թիմի դարպասը:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

**«Հայմամուլ» ՓԲԸ**
հեռ. 45-82-00, 45-19-11

**«Հայփոստ» ՊՓԲԸ**
հեռ. 51-45-46, 51-45-47

**«Բլից-Մեդիա» ՍՊԸ**
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:




Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

## ԱՌԱՋԱՐԿ հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ ____________________

Ազգանուն՝ ____________________

Առաքման հասցե՝ ____________________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________________

*Հեռ.՝(060) 490049*
*0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.*




*«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **18.01.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: